

ՀԱՆԳԻՍ ԵՎ ԳՐԱՏԻԿԵԱՆԻ

Խոր ցաւով կը հաղորդենք թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Սիւթեան Մասնաճիւղերուն, Թեմական Պատգամաւորներուն, յարակից կազմակերպութիւններուն եւ մեր համայն հաւատցեալ ժողովուրդին, թէ Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ երկարամեայ նուիրեալ եւ գործունեայ անդամներէն՝ ճեգ ճանտիկեան ի Տէր հանգեալ:

Հանգուցեալը ծնած է 1919ին Ատանա եւ 1921ին իր ծնողքին՝ Տէր եւ Տիկին Սարգիս եւ Էլիանոր ճանտիկեաններու հետ ժամանած է Էլիս Այլընտ: 1942-1946 ծառայած է Ամերիկեան բանակին մէջ: Արժանացած է բարձր ուսման: 1943ին Եղեմի Սուրբ Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ մէջ ամուսնացած է Օրիորդ Մէրի Մանանեանի հետ եւ միասնաբար ծառայած են Հայց. Եկեղեցւոյ եւ բախտաւորուած են երեք դուստրերով: Գեգ Շինութեան Յանձնախումբի Ատենապետը եղած է առաջին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ:

Հանգուցեալը երկարամեայ ծառայութիւն մատուցած է նաեւ Վարդանանց Ասպետներու՝ Ղեւոնդ Դահլիճի միջոցաւ: Մեծ դեր ունեցած է Եկեղեցւոյ հովանաւորութեամբ գործող Ալֆրետ եւ Մարկրիթ Յովսէփեան Վարժարանի կառուցման աշխատանքներուն մէջ:

Հանգուցեալի թաղման Եկեղեցւոյ Կարգը թեմակալ Առաջնորդ, Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտերեանի գլխաւորութեամբ եւ մասնակցութեամբ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի, Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քհնյ. Փեթոյեանի, Հոգշ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի, Դոկտ. Արժ. Տ. Զաւէն Աւագ Քհնյ. Արզումանեանի, Արժ. Տ. Մուշեղ Աւագ Քհնյ. Թաշճեանի եւ Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Մովսէսեանի տեղի ունեցաւ Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ մէջ՝ Ուրբաթ, Փետրուար 12ի առաւօտեան:

Սրբազան Հայրը խօսեցաւ մխիթարական դամբանական մը եւ վեր առաւ հանգուցեալին երկարամեայ գործունեայ ծառայութիւնը թեմէն եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցիէն ներս: Իր ցաւակցութիւնները յայտնեց Տիկին Մէրի ճանտիկեանին, դուստրերուն, թոռնիկներուն եւ բոլոր սգաւորներուն:

Թաղման Կարգը կատարուեցաւ Mountain View-ի գերեզմանատան մէջ:

«Յիշատակն արդարոյն՝ օրհնութեամբ եղիցի»: